ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«30» «դեկտեմբեր» 2023 թ. №302-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14-Ի N 135-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածը և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի ապրիլի 14-ի «Շրջակա միջավայրի նախարարության հիմնական մասնագիտական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, անտառային կոմիտեի, համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, փակ բաժնետիրական ընկերության, պետական հիմնարկի, գործունեության համակարգումը սահմանելու և շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի հունիսի 27-ի N209-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 135-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունները.

1) 1-ին կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժ.-ժգ.» պարբերություններով.

«ժ. ջրային քաղաքականության վարչություն,

ժա. վտանգավոր նյութերի և թափոնների քաղաքականության վարչություն,

ժբ. կլիմայական քաղաքականության վարչություն,

ժգ. մթնոլորտային քաղաքականության վարչություն,»,

2) ուժը կորցրած ճանաչել 1-ին կետի 4-րդ ենթակետի «բ.-ե.» պարբերությունները:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

8/30/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«30» օգոստոսի 2023 թ.

ք. Երևան